

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 68-27.2-Մ2-1) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ
ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ՝ ԺԱՄԸ 15:00-ԻՆ,
ԱՆՑԿԱՑՎԱԾ ԱՐՏԱՔԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԻ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 22-ի «Մրցույթի թեստավորման փուլի անցկացման պատասխանատու նշանակելու մասին» N Կ1-147-Ա հրամանի պատասխանատու Լուսինե Ալեքսանյանը, մինչ մրցույթի թեստավորման փուլն սկսելը, անձը հաստատող փաստաթղթի հիման վրա ստուգեց մրցույթին մասնակցելու թույլտվություն ստացած և մրցույթին ներկայացած քաղաքացիներ՝

- 1) Արմեն Ալբերտի Ավետիսյան
- 2) Լիանա Ռուբիկի Զոհրաբյան
- 3) Արտակ Ալեքսանդրի Հարությունյան
- 4) Արա Թելմանի Մովսիսյան
- 5) Լուսինե Լևիկի Զվյան

ինքնությունը՝ թույլատրելով նրանց մուտքը մրցույթի թեստավորման անցկացման սենյակ:

Արձանագրվեց, որ մրցույթի թեստավորման փուլին չի ներկայացել մրցույթին մասնակցելու թույլտվություն ստացած քաղաքացի Աննա Ֆելիքսի Մանուկյանը:

Մրցույթի թեստավորման փուլի անցկացման պատասխանատու Լուսինե Ալեքսանյանը, մինչ թեստի կազմումը, մանրամասն ներկայացրեց մրցույթի թեստավորման փուլի անցկացման և թեստավորման փուլի արդյունքների բողոքարկման ընթացակարգերը, բացատրեց թեստավորման փուլի անցկացմանը վերաբերող տեխնիկական հարցերը՝ սպառիչ պատասխանելով մրցույթի մասնակիցների բոլոր հարցերին:

Մրցույթի թեստավորման փուլի անցկացման պատասխանատու Լուսինե Ալեքսանյանը մրցույթի թեստի ձևավորման էլեկտրոնային ծրագրում նախօրոք զետեղված և ծածկագրավորված թեստավորման առաջադրանքներից պատահական ընտրությամբ կազմեց թեստը և թեստի ճիշտ պատասխանների 2 ձևանմուշը:

Մրցույթի մասնակիցներին տրամադրվեց էլեկտրոնային ծրագրով ձևավորված թեստի նույն օրինակները:

Մրցույթի թեստավորման փուլն սկսվեց 2020 թվականի հոկտեմբերի 21-ին ժամը՝ 15:15-ին և ավարտվեց ժամը 16:45-ին:

Մրցույթի թեստավորման փուլի սահմանված ժամանակի ավարտից հետո մրցույթի թեստավորման փուլի անցկացման պատասխանատուն ամփոփաթերթերի համար նախատեսված արկղի կնիքի ամբողջականությունն ստուգելուց հետո պարզեց, որ այն խախտված չէ, և արկղը բացելուց հետո հայտնաբերվեց.

- | | | |
|---------------------------------|---|--------------|
| 1. ամփոփաթերթերի կտրոն՝ | 5 | (հինգ) հատ, |
| 2. ամփոփաթերթերի հիմնական մաս՝ | 5 | (հինգ) հատ, |
| 3. չօգտագործված ամփոփաթերթ՝ | 1 | (մեկ), |
| 4. ճիշտ պատասխանների ձևանմուշ՝ | 2 | (երկու) հատ, |
| 5. անվավեր ճանաչված ամփոփաթերթ՝ | 0 | (զրո): |

Մրցույթի թեստավորման փուլի անցկացման պատասխանատու Լուսինե Ալեքսանյանը, թեստավորման ավարտից հետո ամփոփելով թեստավորման արդյունքները, արձանագրեց.

h/h	Մասնակցի անունը, հայրանունը, ազգանունը	Ամփոփաթերթի հիմնական մասի ծածկագիրը	Ամփոփաթերթի կտրոնային մասի ծածկագիրը	Մասնակցի ստացած միավորների քանակը	Մասնակցի ստացած միավորները տոկոսով
1.	Արմեն Ալբերտի Ավետիսյան	002965	002965	50	100
2.	Լիանա Ռուբիկի Զոհրաբյան	002969	002969	40	80
3.	Արտակ Ալեքսանդրի Հարությունյան	002964	002964	45	90
4.	Արա Թելմանի Մովսիսյան	002968	002968	40	80
5.	Լուսինե Լևիկի Զվյյան	002966	002966	43	86

Մրցույթի թեստավորման փուլի արդյունքներն ամփոփելուց հետո մրցույթի թեստավորման փուլի անցկացման պատասխանատու Լուսինե Ալեքսանյանը հրապարակեց մրցույթի թեստավորման փուլը հաղթահարած քաղաքացիների ցուցակը (կցվում են):

Առդիր՝ 1 էջ:

**ԹԵՏՏԱՎՈՐՄԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝**



ԼՈՒՍԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

«21» հոկտեմբերի 2020 թ.